

# Brusov International



## Այս համարում՝

- Միջազգային ծրագրեր
- Գիտաժողովներ
- Սեմինարներ
- Հանդիպումներ

## ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆՔ 2018Թ. ԵՊԼՀ-ՈՒՄ

### ԷՐԱՋՄՈՒՄ+ ՍՄԱՐԹ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

2018թ. փետրվարի 13-16-ը Հունաստանի Սալոնիկ քաղաքում տեղի ունեցավ Էրազմուս+ ՀԳ2 Նորարարությանն ու փորձի փոխանակմանն ուղղված համագործակցություն, կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում «Համալսարան-

ձեռնարկատիրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդումը ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով» (SMART) ծրագրի մեկնարկային հանդիպումը: ԱՄԱՐԹ ծրագրի թիրախային երկրներն են Հայաստանը, Մոլդովան և Բելառուսը: Ծրագրի հիմնական նպատակն է մոտիվացնել բուհերի ուսանողներին և շրջանավարտներին զարգացնել ձեռնարկատիրական հմտություններն ու կարողությունները,



ակտիվացնել բուհ-գործատու համագործակցությունը ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում են մասնակից բուհերի ինչպես ՊԴ կազմի, այնպես էլ ուսանողների-շրջանավարտների վերապատրաստումներ, մրցույթների անցկացում, 7 ՍՄԱՐԹ կենտրոնների ստեղծում, ձեռնարկի մշակում և այլն: Ծրագրի համակարգողն է Հունաստան Հանրապետության Սալոնիկի Ալեքսանդր տեխնոլոգիական կրթական ինստիտուտը: **ԵՊԼՀ-ում ՍՄԱՐԹ ծրագիրը համակարգում է Կարիերայի կենտրոնը:** ՍՄԱՐԹ ծրագրի շրջանակներում 2018թ. ընթացքում կայացել են մի շարք տեղեկատվական, ինչպես նաև կառավարման հանձնաժողովի անդամների հանդիպումներ գործընկեր համալսարաններում:



**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ  
ԷՍՏՈՆԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ**

Այս տարի Էստոնիայի անկախության վերականգման 100-ամյակի միջոցառումների համատեքստում հայ-էստոնական բարեկանությունն ամրապնդվեց Նարեկացու Մատյանը Եվրոպայում տարածելու, եվրոպական լեզուներով նոր թարգմանություն ստանալու շատ լուրջ քայլով: Հունիսի 11-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում տեղի ունեցավ **Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգություն» երկի էստոներեն թարգմանության շնորհանդեսը:**

ԵՊԼՀ-ը հյուրընկալել էր Էստոնիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիկին **Կաի Կաարելսոնին**, ՀՀ մշակույթի նախարար **Լիլիթ Մակունցին** և Էստոնիայի մշակույթի նախարար **Ինդրեկ Սաարին**, ինչպես նաև երաժիշտ, ստեղծագործող, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» էստոներեն թարգմանության հեղինակ **Պենտեր Վոլկոնսկուն:** Գիրքը երկու երկրների՝ Հայաստանի և Էստոնիայի հանրապետությունների մշակույթի նախարարությունների համագործակցության արդյունքն է:



**ԵՊԼՀ-Ի ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆԱԴԱՅԻ  
ՀԱՄԱԼՄԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ  
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ՇԱԲԱԹԻՆ**

Էրազմուս+ Միջազգային կրեդիտային շարժունության գործողության շրջանակներում Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի և Իսպանիայի Թագավորության Գրանադայի համալսարանի միջև կնքված պայմանագրով ԵՊԼՀ անձնակազմի համար հայտարարված մրցույթի արդյունքում 2018 հուլիսի 2-ից հուլիսի 6-ը ԵՊԼՀ-ի Անգլերենի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Եղիազարյանը և Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ Լուսինե Մադոյանը մասնակցեցին **Գրանադայի համալսարանում կայացած անձնակազմի վերապատրաստման դասընթացներին (Staff Training Week):**



Վերապատրաստումը նախատեսված էր միջազգային համագործակցության գործընկերների համար, որին մասնակցում էին 24 երկրից 96 ներկայացուցիչ, և նպատակաուղղված էր բուհերի միջազգայնացման ընթացակարգերի ներկայացմանը, լավագույն փորձի փոխանակմանը, ինչպես նաև առաջարկելու շարժունության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործիքներ և միջոցներ: Վերապատրաստումը լայն հարթակ էր ապահովում գիտելիքների ձեռքբերման, փորձի փոխանակման և ոլորտի մասնագետների միջև կապերի հաստատման համար: Արդյունքում, նոր ծանոթություններ և համագործակցության պայմանավորվածություններ ձեռք բերվեցին մասնակից համալսարանների ներկայացուցիչների հետ:

**Ի դեպ, ԵՊԼՀ պրոֆեսորդասախտասական և վարչական անձնակազմը պարբերաբար մասնակցում է միջազգային ծրագրերի, սեմինարների, գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների տարբեր միջազգային հարթակներում:**

**2018 թ ընթացքում ԵՊԼՀ անձնակազմից շուրջ 90 հոգի մասնակցել է նմանատիպ ծրագրերի, անցել վերապատրաստումներ, անցկացրել դասախոսություններ, իրկանացրել փորձի փոխանակումներ: Իսկ ուսանողական կազմից Էրազմուս + ծրագրի շրջանակներում բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով մոտ 10 ուսանողներ հնարավորություն են ստացել կարճաժամկետ ուսումնառել Եվրոպական բուհերում (Բելգիա, Ռումինիա, Իսպանիա և այլն):**

## ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ



Հուլիսի 6-ին ԵՊՀՀ ռեկտոր Կարինե Հարությունյանը ընդունեց **Չինաստանի Շանհայի Բիզնես դպրոցի պատվիրակությանը:** Չինական պատվիրակության կազմում էին Շանհայի Բիզնես դպրոցի փոխնախագահ Զժոն Յուվեյը, Կրթակոշակների և փոխանակման ծրագրի համակարգող Խու Վեյնը, ուսանողների հետ տարվող աշխատանքների համակարգող Վու Վեյը, Շանհայի Բիզնես դպրոցի արվեստի և դիզայնի ֆակուլտետի դեկան Պեյ Կայնիանը, ծրագրերի համակարգող Զժան Վեյնը:

Չին գործընկերների հետ հանդիպմանը ներկա էին նաև ԵՊՀՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանը, ԵՊՀՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության պետ Բ. Ծատուրյանը, Կոնֆուցիոսի ինստիտուտի տնօրեն Գ.Սարգսյանը և բուհի այլ ներկայացուցիչներ:

Ռեկտորը հյուրերին ներկայացրեց ԵՊՀՀ պատմությունը, ուսումնագիտական գործընթացն ու միջազգային համագործակցությունը՝ մատնանշելով արևելյան երկրների և մասնավորապես չինական կրթական հաստատությունների հետ արդյունավետ փոխգործակցության ոլորտներն ու զարգացման միտումները:

Չինաստանից ժամանած հյուրերի գլխավոր նպատակն էր կրթության ոլորտում **ընդլայնել Հայաստանի ու Չինաստանի փոխգործակցության շրջանակը**, քննարկել

ԵՊՀՀ-ի հետ փոխգործակցություն սկսելու բոլոր ուղիները (համատեղ ամառային դպրոց, փոխանակման ծրագրեր ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի համար, համատեղ հետազոտական և կրթական ծրագրեր, գիտաժողովներ ու սեմինարներ), քննարկել փորձի փոխանակման հետ կապված մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին բուհերի ղեկավարները **փոխգործակցություն հուշագիր** ստորագրեցին և փոխանակվեցին հուշանվերներով:



Ռեկտորի հետ հանդիպմանը հաջորդեց չինական պատվիրակության այցը **Չինարենի կենտրոն**, որտեղ տեղի ունեցավ մասնագիտական քննարկում բուհի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:



**ԱՊՀ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ  
ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

2018թ. հունիսի 5-ին Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանում կայացավ **ԱՊՀ ցանցային համալսարանների համակարգող հանձնաժողովի հանդիպումը**: Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, մասնավորապես ԱՊՀ ցանցային համալսարանի իրավական փաստաթղթային հենքը և դրանցում առաջարկվող փոփոխությունները, ԱՊՀ ցանցային համալսարանների կոնսորցիումի անդամների փորձը, կոնսորցիումին նոր մասնակից համալսարանների միանալը և 2018/2019 թթ. աշխատանքային ծրագիրը հաստատելը:



ԵՊՀՀ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության պետ Քրիստինա Ծատուրյանը հանդիպում է ունեցել նաև ԵՊՀՀ-ի համագործակից համալսարան Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի գիտական գծով պրոռեկտորի, ԱՊՀ և ՇՀԿ մասնակից երկրների լեզվի և մշակույթի բաժնի ղեկավար Վլադիմիր Նիկոլանիչ Կոնևի և Հայոց լեզվի և մշակույթի կենտրոնի տնօրեն, ԵՊՀՀ-ի դասախոս Արմինե Մարտիրոսյանի հետ, որոնց հետ քննարկվել է ս.թ. նոյեմբերին ԵՊՀՀ-ում կայանալիք **«ԱՊՀ և ՇՀԿ երկրների մշակույթների երկխոսություն» թեմայով ֆորումի** մանրամասները, հրավիրյալների կազմը և այլ կազմակերպական հարցեր:

**«ԲՐՅՈՒՍՈՎՅԱՆ  
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ 2018»**



Սեպտեմբերի 19-ին ԵՊՀՀ-ում մեկնարկել էր **«Բրյուսովյան ընթերցումներ 2018»** միջազգային հոբբյանական գիտաժողովը: Այն նվիրված էր **Վ. Բրյուսովի ծննդյան 145-ամյակին** և «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրություն» գրքի հրատարակման 100-ամյակին: Գիտաժողովը կազմակերպել էր ԵՊՀՀ-ն՝ շրջանավարտների միության աջակցությամբ: Գիտաժողովի գործընկերներ էր Երևանում գործող Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ԵՊՀՀ ռեկտոր Կ.Հարությունյանը, ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիլովիչը, ՀՀ ԿԳ փոխնախարար Արևիկ Անափիոսյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Տիգրան Գալստյանը, Երևանում Ռուսաստանի գիտության և կրթության կենտրոնի տնօրեն Սերգեյ Ռիբինսկին:

Գիտաժողովին մասնակցում էին առաջատար բուհերի հայտնի գիտնականներ և երիտասարդ **մասնագետներ 9 երկրներից՝** ՀՀ-ից, ՌԴ-ից, Ուկրաինայից, ԱՄՆ-ից, Ճապոնիայից, Վրաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, և Լեհաստանից, որոնք մինչ օրս շարունակում են հավատարիմ մնալ բրյուսովյան ստեղծագործության ուսումնասիրության ավանդույթներին: Գիտաժողովի ընթացքում մասնակիցները հանդես եկան հետաքրքիր և բազմաբնույթ զեկույցներով: Նախատեսված էին նաև **«Բրյուսովյան գիտական կենտրոնի արխիվի պատմությունը»** ցուցահանդեսի բացում, Google Arts & Culture հարթակում վիրտուալ հավաքածուների շնորհանդեսներ, և էքսկուրսիաներ:

**Ի դեպ ԵՊՀՀ-ն համագործակցում է 60-ից ավել համալսարանների և միջազգային կառույցների հետ, իսկ 2018թ. ընթացքում կնքվել են 20 նոր միջազգային համագործակցության պայմանագրեր Իսպանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռումինիայի, Լեհաստանի Չինաստանի և այլ երկրների հաստատությունների հետ:**

# «ԲՈՒՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿՎՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՆԱԶՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅ-ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (NACAR) ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

2018թ. սեպտեմբերի 24-ին ԵՊԼՀ-ում տրվեց «Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման վերաբերյալ հայ-նորվեգական համագործակցություն» եռամյա ծրագրի մեկնարկը: Ծրագիրն իրականացվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊԼՀ), Երևանի Ս. Հերացու անվան բժշկական համալսարանի (ԵՊԲՀ), Ակադեմիական փոխճանաչման և շարժունության կենտրոնի (ԱՓՇԱՏԿ), Հարավարևելյան Նորվեգիայի համալսարանական քոլեջի (USN), Կրթության որակի ապահովման նորվեգական գործակալության (NOKUT) ու Միջազգային համագործակցության և բարձրագույն կրթության որակի բարձրացման նորվեգական գործակալության (Diku) հետ: Ծրագիրն ուղղված է օտարերկրյա ուսանողների ընդունելության և



որակավորումների ճանաչման ինստիտուցիոնալ համագործակցային ընթացակարգերի մշակմանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊԼՀ ռեկտոր Կ. Հարությունյանը, որը կարևորեց բազմակողմ համագործակցությունը և վստահություն հայտնեց, որ համագործակցության այսօրինակ սկիզբը ճանապարհ է բացելու նոր ավելի լայն հնարավորությունների համար: Երկօրյա հանդիպումների ընթացքում ծրագրի մասնակից և գործըկեր բոլոր կողմերն էլ իրենց հերթին ներկայացրին իրենց հաստատությունը և գործառույթները: Աշխատանքային երկրորդ օրը ձևավորված 3 աշխատանքային խմբերը քննարկեցին ծրագրի հետագա անելիքները և յուրաքանչյուր կողմի գործառույթները:

## ԱՎՍՏՐԻԱՅԻ ՕՐԵՐԸ ԵՊԼՀ-ՈՒՄ

Սեպտեմբերի 29-ից 30-ը «Ավստրիայի օրեր Երևանում» միջոցառումների շրջանակում Ավստրիական գրադարանի հյուրերն էին Ավստրիայի կրթության և գիտության նախարարության «Մշակույթ և լեզու» բաժնի ղեկավար Նորբերտ Հաբելտը, նույն բաժնի աշխատակից Լուկաս Մայերհոֆերը և ավստրիացի կիթառահար Յուլիա Մալիշնիգը: Միջոցառումների կարևորագույն մասն են կազմում գերմաներենի դասախոսների և ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման դասընթացները՝ նվիրված Ավստրիայի երկրագիտությանը: Լ. Մայերհոֆերը ներկայացրեց «Մշակույթ և լեզու» բաժնի կողմից ստեղծած «Կանայք Ավստրիայում» ուսումնական նյութը:



Հաջորդ աշխատաժողովը «Գերմաներենը որպես բազմակենտոն լեզու» թեմայով էր, որի քննարկման առարկան ավստրիական գերմաներենի առանձնահատկություններն էին: Պրն. Ն. Հաբելտը զեկուցեց գերմանախոս երկրների (DACHL) համատեղ գործունեության մասին: Մասնակիցները ծանոթացան նաև Ավստրիայի ԿԳՆ «Մշակույթ և լեզու» բաժնի կողմից իրականացվող ծրագրերին: Մասնակիցները պատրաստեցին նաև ավստրիական խոհանոցի ավանդական ուտեստներ:

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՆՖՈՒՑԻՈՒՄԻ 2569  
ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**



2018թ սեպտեմբերի 26-ից 30-ը Չինաստանի Ցուժոու քաղաքում ԵՊԼՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտի ուսումնական մասի համակարգող **Լիլիթ Հակոբյանը** և Փիլիսոփայության և պատմության ամբիոնի վարիչ **Հակոբ Մաղոյանը** մասնակցել են Կոնֆուցիուսի հիշատակին նվիրված ամենամյա հանդիսություններին:

Հանդիսությունները նվիրված էին **Կոնֆուցիուսի 2569-ամյակին**, դրանց ներկա են գտնվել Կոնֆուցիուսի ինստիտուտների շուրջ 8 տնօրեններ և ներկայացուցիչներ՝ շուրջ 40 երկրից: ԵՊԼՀ-ի ներկայացուցիչները մասնակցել են բոլոր հանդիպումներին և միջոցառումներն՝ ներկայացնելով Հայաստանը և ԵՊԼՀ-ն, տվել են հարցազրույցներ մի շարք ՋՄԼ-ների, հանդես են եկել ելույթով Կոնֆուցիուսի հիշատակման արարողության ժամանակ:

**Ա. ՍՈԼԺԵՆԻՑԻՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

ԵՊԼՀ Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ հոկտեմբերի 3-ին բուհում մեկնարկեց ռուս արձակագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ, Նոբելյան մրցանակի դափնեկիր **Ա. Սոլժենիցինի 100-ամյակին նվիրված գիտաժողովը**, որի անցկացման գաղափարը պատկանում է մեր բուհի պրոֆեսոր, ռուսագիտության վետերան պարոն Միխայիլ Ամիրխանյանին: Տարբեր երկրների առաջատար գրականագետներ են հյուրընկալվել ԵՊԼՀ-ի հարկի տակ՝ ուսումնասիրելու Սոլժենիցինի գրական ժառանգության խնդիրները:

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ  
ՄԱԹԻԱՍ ՔԻՍԵՐԻ ԱՅՑԸ**

ԵՊԼՀ ռեկտոր Կարինե Հարությունյանը հոկտեմբերի 5-ին ընդունեց ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Մաթիաս Քիսլերին**: ԵՊԼՀ նիստերի դահլիճում տեղի ունեցած հանդիպմանը ներկա էին գերմաներեն դասավանդող դասախոսներ և ուսանողներ: **«Գերմաներենի օրեր Հայաստանում»** միջոցառումների շրջանակում տեղի ունեցած այս հանդիպման ընթացքում պարոն Քիսլերը ընթերցեց հատվածներ **Բերնհարդ Շլինկի «Ընթերցողը» վեպից**:

Միջոցառմանը ներկա էր նաև վեպի հայերեն թարգմանիչ Գայանե Գինոյանը, որը հատվածներ ներկայացրեց հայերեն թարգմանությունից: 45-ից ավելի լեզուներով թարգմանված միջազգային բեստսելլերը համարվում է գերմանական գրականության ամենաճանաչված ստեղծագործություններից մեկը:

Հանդիպումից հետո պատվիրակության անդամներն այցելեցին նաև **Ֆրանց Վերֆելի անվան ավստրիական գրադարան**, որտեղ գրադարանի գիտական ղեկավար Լ. Սաֆարյանը, ներկայացնելով գրադարանը, փաստեց 4000-ից ավել գերմանալեզու գրականության առկայության կարևորությունը գերմաներեն ուսումնառողների համար:

2018թ.-ին ԵՊԼՀ-ն շարունակել է ակտիվորեն համագործակցել ՀՀ-ում տարբեր երկրների դեսպանատների հետ: Դեսպանների արդեն ավանդական դարձած այցերը (10-ից ավել) ԵՊԼՀ նպատակաուղղված են խթանելու համապատասխան երկրի լեզվի և մշակույթի ուսուցումը ԵՊԼՀ-ում, ապահովելու և զարգացնելու համագործակցությունը այդ երկրների բուհերի հետ, կազմակերպելու կրթական, գիտական ու մշակութային միջոցառումների և այլն:



Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ Գրողների միության միակ ռուսալեզու հայկական գրական-գեղարվեստական հասարակական և քաղաքական ամսագրի՝ «Գրական Հայաստան»-ի փոխխմբագիր Սերգեյ Մուրադյանը:



**ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ**

Հոկտեմբերի 18-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած **Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի (ՉՀԳԱ) պատվիրակությանը** գլխավոր քարտուղարի տեղակալ պարոն Հան Դաչուանի գլխավորությամբ, հյուրընկալեց նաև ԵՊՀ-ն: Պատվիրակության կազմում էին նաև ՉՀԳԱ տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ և ներկայացուցիչները: Հանդիպմանը ներկա էին ԵՊՀ ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտոր Բ. Մարգարյանը, Մոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի ղեկան Յ. Ակոպյանը, Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետի ղեկան Հ.Ճանճապանյանը, Արտաքին կապերի և միջազգային համագործակցության



վարչության պետի տեղակալ Լ. Մադոյանը, Կոնֆուցիուսի ինստիտուտի տնօրեն Գ. Մարգարյանը, ԵՊՀ գրադարանի ղեկավար Ա. Զուլյանը և այլք: Հանդիպման հիմնական նպատակը երկու կողմերի միջև համագործակցության ընդլայնմանն ուղղված քայլերի մշակումն էր: Կողմերը ներկայացրեցին իրենց կառույցների գործունեությունը, իրականացվող ծրագրերը, ինչպես նաև հայ-չինական հարաբերությունների զարգացման համար հնարավոր համագործակցության տարբերակները:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԱՐԹԻՆ  
ԱՅՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ԼՅՈՒԹԵՐ ԶԱԼԼԵ-ՎԻՏԵՆԲԵՐԳ ԶԱՄԱՍԱՐԱՆ**

Հոկտեմբերի 18-ից 20-ը ԵՊՀ ռեկտոր **Կարինե Հարությունյանը** և արտաքին կապերի ու միջազգային համագործակցության վարչության պետ **Քրիստինա Մատուրյանը** պաշտոնական այցով գտնվում էին Գերմանիայի Մարթին Լյութեր Հալլե-Վիտենբերգ համալսարանում: Այցի շրջանակներում, ԵՊՀ-ի պատվիրակությունը մասնակցեց համալսարանի նոր ռեկտոր պրոֆեսոր **Քրիստինա Թիթյեին** պարտականությունների փոխանցման հանդիսավոր արարողությանը: Հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ բուհերի **ռեկտորների հանդիպումը**,

որի ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության հեռանկարները: Առանձին հանդիպումներ տեղի ունեցան նաև արևելագիտության ինստիտուտի տնօրեն **Կորնելիա Հորնի**, քաղաքագիտության ֆակուլտետի ղեկան **Պետրա Դոբների**, ինչպես նաև գերմանիստիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ պրոֆեսոր Հ. Զոլմսի հետ՝ մանրամասն քննարկելու հետագա համագործակցությունը:

Հոկտեմբերի 19-ին նրանք մասնակցեցին նաև «Մեսրոպ» հայագիտության կենտրոնի 20-ամյակին նվիրված հանդիսավոր արարողությանը, որին ներկա էին բարձրաստիճան հյուրեր, այդ թվում՝ ՀՀ ԿԳՆ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանի ղեկավարությամբ Հայաստանի պատվիրակությունը, Գերմանիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը: Հանդիսավոր արարողության ընթացքում նշվեց այն մեծածավալ հայապահպան աշխատանքները, որոնք տարվել են «Մեսրոպ» կենտրոնի կողմից:

**Հավելենք, որ 2018թ. սեպտեմբերին ԵՊՀ-ում անցկացվեց «ԵՊՀ չինարենի ուսուցիչների և չինարենը որպես առաջին օտար լեզու ուսումնասիրող ուսանողների համար դրոմաշտորի» մրցույթը, որին հաղթող ճանաչվեցին 5 ուսանող և 1 դասախոս:**

**Հիշեցնենք, որ 2018թ. մայիսին ստորագրվեց գիտական և մշակութային համագործակցության պայմանագիր ԵՊՀ-ի և Հալլե Վիտենբերգի Մարտին Լյութերի համալսարանի միջև:**



**«ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ» X  
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
ԵՊԼՀ-ՈՒՄ**

ԵՊԼՀ-ում հոկտեմբերի 23-ին տրվեց «Աշխարհի լեզվական պատկերը» X միջազգային գիտաժողովի մեկնարկը: Գիտաժողովի կազմակերպիչը ԵՊԼՀ Ռոմանական լեզուների ամբիոնն էր: Գիտաժողովի բացմանը ներկա էր նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդական Ալեքս Բորտոլանը, որը ևս ողջունեց գիտաժողովի մասնակիցներին: Գիտաժողովի աշխատանքները հիմնական երեք աշխատանքային խմբերում էին ընթանում՝ թարգմանություն և միջմշակութային հաղորդակցություն, դասավանդման նորագույն մեթոդներ, միջմշակութային հայեցակետ և համեմատական գրականություն:



Գիտաժողովի ընթացքում ելույթներով հանդես եկան արտասահմանյան հեղինակավոր մի շարք բուհերի դասախոսներ, որոնց թվում՝ Մարիա Էլենա Արոջո Կարերան և Բերնար Ֆրանկոն Փարիզի Սորբոնի համալսարանից, Լյուդվիլա Զբանտը և Անժելա Գրադինարուն Քիշնևի պետական համալսարանից, Իրինա Բաբամովան Սկոպյեի համալսարանից, Վադիմ Կոլեսնիկովը Մինսկի լեզվաբանական համալսարանից և այլք:

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ԿՐԹԱԹՈՇԱԿ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**



Հոկտեմբերի 25-ին ԵՊԼՀ-ում անցկացվեց Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ (ՄԽԿ) ծրագրի շնորհանդեսը, որի ընթացքում գերմանական պատվիրակությունը ներկայացրեց ծրագիրը և անդրադարձավ Բեռլինում ուսումնասելու հնարավորություններին:

Մա նոր գիտելիքներ և արժեքավոր փորձ ձեռք բերելու հիանալի հնարավորություն է: Բունդեսթագն ամեն տարի տրամադրում է Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ 42 երկրների բուհերի քաղաքականությամբ հետաքրքրվող երիտասարդ շրջանավարտներին: Ծրագիրը նախատեսված է ՀՀ բուհերի գերմանախոս ուսանողների համար և հնարավորություն է տալիս հայաստանցի ուսանողներին և երիտասարդներին լինել Գերմանիայի Բունդեսթագում, անձամբ շփվել քաղաքական գործիչների, տարբեր պատգամավորների հետ:



ԵՊԼՀ-ն 2018թ ներկայացրել է հայտ մասնակցելու Բրիտանական խորհրդի ձեռնարկատիրական կրթության և ստեղծարար ոլորտի զարգացման «Ստեղծարար միտք» ծրագրին և հաղթել մրցույթում: ԵՊԼՀ-ն Մեծ Բրիտանիայի Էսսեքսի համալսարանի և Չեյնջ Մքուլ կազմակերպության հետ համագործակցության արդյունքում այն 20 հաջողակների կազմում է, որը հաղթահարել է բարդ մրցակցությունն ու գնահատման խիստ գործընթացը: Ծրագիրը ուսանողներին ու ստեղծարար ձեռներեցներին հնարավորություն կընձեռնի



ձեռք բերել համապատասխան հմտություններ՝ բիզնես գաղափարների մշակման փուլից մինչև բիզնես ծրագրի ձևավորում և իրականացում:

**«ՍՏԵՂԾԱՐԱՐ  
ՄԻՏՔ» ԾՐԱԳՐԻ**



# ԷՐԱԶՄՈՒՄ + ՄԵՄԻՆԱՐՆԵՐ ԵՊԼՀ-ՈՒՄ

## «ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ և ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ»

Էրազմուս + սեմինարներին մասնակցել են 50-ից ավել պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական կազմի ներկայացուցիչներ:

Մեմինարները հնարավորություն են ընձեռել մասնակիցներին զարգացնել իրենց կարողությունները և ստեղծարար մտածողությունը:

Նոյեմբերի 8-ին և 9-ին ԵՊԼՀ-ում տեղի ունեցավ «Ուսումնառության և դասավանդման պլանավորման գործընթացի ներառումը հայաստանյան բուհերի ուսումնական ծրագրերում» խորագրով Էրազմուս + սեմինար: Երկօրյա սեմինարը վարեց Գերմանիայի Օսնաբրուկի կիրառական գիտությունների համալսարանի պրոֆեսոր, Բոլոնիայի փորձագետ և Եվրոպական որակավորումների շրջանակի համանախագահող պարոն Վոլկեր Գեմլիխը: Մեմինարի առաջին օրվա հիմնական թեմաներն առնչվում էին գործող և նոր ծրագրերի հարմարեցմանը Հայաստանի Ազգային որակավորումների շրջանակին և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ներկայիս վիճակին, սպասվելիք արդյունքների ապահովմանը, գրոյից նոր կրթական ծրագրերի ստեղծմանը, գիտելիք ստանալու հարցում ուսուցչի դերի և ուսուցման արդյունքների գնահատման կարևորությանը:



Երկրորդ օրն առավել գործնական էր. սեմինարի մասնակիցներն իրենք, բաժանված լինելով 3 խմբերի, պետք է մշակեին կրթական ծրագրեր՝ «Լեզվաբանության», «Տուրիզմի կառավարման» և «Մանկավարժության» համար: Մեմինարը եզրափակվեց Ազգային որակավորումների շրջանակի համապատասխանեցման հնարավոր ուղիների մասին քննարկմամբ և մշակմամբ:

## « ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ»

Նոյեմբերի 27-ին ԵՊԼՀ-ում մեկնարկեց Էրազմուս+ բարձրագույն կրթության «Ձեռնարկատիրական կարողությունների զարգացումը բուհերում» սեմինարը, որը վարում է Բարսեղունայի համալսարանի պրոֆեսոր Պերե Խուարեսը:

Հարափոփոխ աշխարհում ձեռնարկատիրական մտածելակերպի խթանումն այլընտրանք չունի:

Ձեռնարկատիրության և նորարարության՝ այս ծրագիրը թիրախավորում է այն մարդկանց, որոնք փնտրում են կիրառելի գիտելիքներ՝ ձեռնարկատիրության և նորարարության, դրանց առանցքային գործիքների, մեթոդների և գործընթացների ճկուն կառավարման վերաբերյալ:



Մեմինարին մանակցություն ցուցաբերեցին ինչպես ԵՊԼՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, այնպես էլ գործընկեր բուհերից ներկայացուցիչներ:

**« ԱՊՀ ԵՎ ՇՀԿ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՑԹՆԵՐԻ  
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ» 14-ՐԴ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ**

2018թ. նոյեմբերի 22-23ը Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում տեղի ունեցավ «Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) և Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) լեզուների և մշակույթների երկխոսությունը 21-րդ դարում» 14-րդ միջազգային համաժողովը: Համաժողովն իրականացվում է Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի (ՄՊԼՀ) և ԵՊԼՀ-ի համատեղ ջանքերով՝ ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական ֆոնդի ֆինանսական աջակցությամբ: Միջազգային համաժողովի բացման արարողության ընթացքում ողջունի խոսքով հանդես եկան ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Մերգեյ Կոպիրիկինը, ՀՀ կրթության և գիտության նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը, Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր **Իրինա Կրանան**, ինչպես նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի ընդհանուր քաղաքական և սոցիալական խնդիրների հումանիտար համագործակցության ղեկավարամենտի փոխնազահ **Փիրուզա Կոսիմովան**:



մասշտաբի համաժողով հյուրընկալելը: Համաժողովը նոր շարժիչ ուժ կդառնա ԱՊՀ և ՇՀԿ երկրների միջև համագործակցության համար Ծրագրով անցկացվել են **լիազուժար նիստեր, կլոր-սեղան հանդիպումներ, վարպետության դասեր**, որոնց մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Հյուսիսային Օսիայի, Տաջիկստանի և Ուզբեկստանի առաջատար բուհերի, գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, պետական կառավարման համակարգի շուրջ **200 ներկայացուցիչներ**:



ԵՊԼՀ Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի ղեկան Նինան Տատկալոն ողջունեց ներկաներին՝ նշելով, որ ԵՊԼՀ-ի համար մեծագույն պատիվ է նման

Համաժողովը հնարավորություն ընձեռեց Հայաստանի բուհերի ներկայացուցիչներին կապեր հաստատել ԱՊՀ երկրների գործընկերների հետ, ինչպես նաև քննարկել հնարավոր համատեղ ուսուցման ծրագրեր և արդի գիտական խնդիրներ, ինչպես նաև մշակել համագործակցության հետագա քայլեր: Համաժողովի շրջանակներում բուհերի ներկայացուցիչները ելույթներով, ինչպես նաև որպես համակարգողներ հանդես եկան ֆ բոլոր նստաշրջանների ընթացքում: Զեկուցողների թեզիսները և գիտական հոդվածները կհրատարակվեն Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ժողովածուում (**«Вестник МПЛУ»**):

Հավելենք, որ Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հետ պայամանավորվածություն ձեռք բերվեց, և տարվում են աշխատանքներ ԵՊԼՀ-ում «Կիրառական լեզվաբանություն» մասնագիտությամբ համատեղ բակալավրի կրթական ծրագիր մշակելու և ներդնելու համար:

## ԱՐԳԵՆՏԻՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ ԵՊԼՀ-ՈՒՄ



2018թ. դեկտեմբերի 18-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում բացվեց **Արգենտինական կենտրոն**: Կենտրոնի բացումը իրականացվել է ԵՊԼՀ-ի, ՀՀ-ում **Արգենտինայի Հանրապետության դեսպանատան** և «Կոնվերս Բանկ»-ի համագործակցության շրջանակներում՝ վերջինիս ֆինանսական աջակցությամբ և հովանավորությամբ:

Բացմանը ներկա էին Հայաստանում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն **Գոնսալո Ուրրիոլաբեիտիան**, «Կոնվերս Բանկ»-ի գործադիր տնօրեն **Արթուր Հակոբյանը**, ԵՊԼՀ ռեկտոր **Կարինե Հարությունյանը**, ինչպես նաև այլ հյուրեր և գործընկերներ:

Կենտրոնը ոչ միայն լեզուն սովորելու և արգենտինական մշակույթի առանձնահատկություններին ծանոթանալու հիանալի հնարավորություն կստեղծի, այլև՝ հետագայում հաջողված փորձ լինի երկրորդ լրացուցիչ մասնագիտություն ընտրողների համար:

Արգենտինական կենտրոնի նպատակն է խթանել իսպաներենի և արգենտինական մշակույթի ուսուցումը, Հայաստանի և Արգենտինայի կրթական հաստատությունների միջև համագործակցության ընդլայնումը, ինչպես նաև իսպաներենի մասնագիտական դասընթացների իրականացումը:



### ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



Թումանյան փող. 42, Երևան, ՀՀ, 0002  
+374 11 300-111 (2-07, 2-20)  
intrel@brusov.am  
www.brusov.am